1883 ԵՐԵՄԱՄԱՏԵԱԿ 1912

ԱՂԲԻՒՐ

№ 4 XXX ԵՊՐԻԼ XXX 1912

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տ. Տ. Դէորգ Կաթող. ամեն. հայոց . . . Պատկեր.
Նոր ընկերը . . . . . Ս. ք. Ասլանեանց.
Մարդասէր սամարացին . . . . . Պատկեր.
Հարսնեւոր ուղտը (առակ) . . . . . Պ. Մոճոռեանց.
Օհան-ափեն մանկավարժ . . . . . Լ. Մ.—Ադամեան.
Ձայլամ . . . . . Պատկեր

ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Բուսականութեան նշանակութիւնը . . . . Ջ. Տ.—Գր.
Վագր . . . . . Պատկեր.
Ջուն . . . . . Ն. Վ. Տ. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

Աւարայր (պատմական). . . . . Ց. Պետրոսեան.
Մարդապաններ. . . . . Պատկեր

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Կարա-Մուրզա . . . . . Ատրպետ.

ՀԻԱՐՀԱԼԻՔ

Բառախաղեր . . . . . .
Տառախաղ. . . . . Գր. Ն. Լփրիկեան.

Յայտարարութիւններ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Հարկադրուած ենք և ներկայ №-ում չը զետեղել Տօրի եւ Մալի յաւելուածը: Պատճառը, բաժանորդներից շատերը, որոնք ժամանակին չէին ստորագրել յաւելուածներով, այժմ են միայն դիմում և բաժանորդագրւում ու առաջարկին շվոթութիւն. որին ինչ կերպ ուղարկելը ժամանակ է պահանջում, ուստի Տօրի եւ Մալու շարունակութիւնը կըսկսւի հետևեալ №-ից:

ԱՂԲԻՒՐ՝ ամսական 20 կ., 2 ամիսը՝ 35 կ., 3 ամիսը 50 կ.
Հասցէն՝ Тифлис. Редакція „АГБЮР“.

ԱՂԲԻՒՐ

Երեսունեերորդ տարի 1912 № 4 Ա պ ր ի լ

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Չագարեան

ՆՈՐԻՆ ՎԵՀՓԵՓԵՌՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶՆԵԳՈՑՆ ԿԵՐՈՂԻԿՈՍ ԳԼՈՒԽՔ Ե.

ՆՈՐ ԸՆԿԵՐԸ

(«Ս. ղ բ ի ւ ր ի» 30-ամեակի առիթով)

I

Ես ունէի մանկութեան մի ընկեր։

Մենք ապրում էինք միևնոյն բակում. սովորում էինք միևնոյն դպրոցում և միշտ միասին խաղում։

Շատ յաճախ կռւում, ծեծում իրար, խռովում մէկ-մէկուց, բայց մի քանի ժամից յետոյ՝ նորից հաշտւում և դարձեալ միասին խաղում...

Մենք ընկերներ էինք։

Ընկերներ էինք ամեն բանով, երկուսս էլ հասարակ, բանւոր մարդկանց երեխաներ էինք. հագնւում էինք համարեա միատեսակ, ուտում-խմում էինք—նոյնպէս, խաղում էինք միատեսակ խաղալիքներով—մի խօսքով չըկար մէկն ու մէկիս մէջ մի արտաքին առաւելութիւն, որ նախանձ, ատելութիւն շարժէր միւսի մէջ...

Գալով մեր ներքին արժանաւորութիւններին՝ նա-Ռուբէնը-մի թեթև նախանձ էր շարժում

իմ մէջ. նա աւելի ընդունակ էր և լաւ էր սովորում։

Մի անգամ երկուսս էլ գալիս էինք դպրոցից։

— Այսօր ինձ վարժապետը հայերէն գիրք տւեց կարդալու, իմացա՞ր... ասաց ուրախացած Ռուբէնը և հանեց գրքերի միջից մի բարակ, անկազմ գիրք և տւեց ինձ նայելու։

—Վարժապետը ասաց՝ կարդա՛, մէջը լաւ-լաւ պատմւածքներ, հէքիաթներ, երգեր կան...

Ես վերցրի գիրքը, նայեցի, շուռ ու մուռ տւի և գրքի ճակատին կարդացի խոշոր տառերով գրած Աղբիւր...

II

Անցնում էին օրեր, ամիսներ. մենք դարձեալ պատահում էինք Ռուբէնի հետ, խաղում միասին, բայց ես նկատում էի, որ Ռուբէնը այժմ յաճախ իմ կանչին, միասին խաղալու, չէր պատասխանում և չէր դուրս գալիս տնից։

Բայց մի օր էլ, երբ նա իմ կանչին դուրս չեկաւ, վազեցի նրանց տուն, որ նրան զօռով դուրս բերեմ, և ի՞նչ... Ռուբէնը նստած գիրք էր կարդում։

— Ռուբէն-ջան, խնդրում եմ, թող որ այս հէքիաթը վերջացնեմ՝ իսկոյն կը գամ խաղալու...

Ես նրա ձեռից գիրքը խլեցի, դէն շպրտեցի և դուրս բերի։

Երբեմն էլ պատահում էր, որ երբ ես դուրս էի գալիս բակը՝ տեսնում էի նրան նստած մի անկիւնում—դարձեալ գիրքը ձեռին կարդալիս։

Նա սկսել էր խաղով այնքան էլ չը հետաքրքրուել. ուզում էր միշտ առանձնանալ, մենակ լինել և...կարդալ։

Ռուբէնը յաճախ ինձ պատմում էր իր կարդացած հէքիաթներից, նոր-նոր ոտանաւորներ էր արտասանում։

Ես մի կողմից նախանձում էի նրան, միւս կողմից էլ բարկանում էի վրան, որ նա այլևս ընկերուհին չէր անում ինձ։

— Դու քեզ համար նոր ընկեր ես գտել, նոր Սուրէն ես գտել...

— Գնա նոր ընկերոջդ հետ խաղ արա...

— Երևի նոր ընկերդ աւելի հետաքրքիր է քեզ համար։..

Ասում էի ես Ռուբէնին երբեմն բարկացած։

Ինձ լսելով ծաղրում էին նրան և նրա դրպրոցական միւս ընկերները, երբ տեսնում էին գիրք կարդալիս...

Եւ ամեն անգամ ես նրա ձեռին տեսնում էի նոյն անկազմ, բարակ գիրքը—որի ճակատին գրած էր լինում—Աղբիւր...

III

Անցան տարիները, երկար ձիգ տարիները...

Ռուբէնը և ես մտանք կեանքի մէջ. մենք թէպէտ դարձեալ ապրում էինք միևնոյն քաղաքում, բայց շատ ուշ-ուշ էինք պատահում իրար, որովհետև մենք բոլորովին իրարից տարբեր ուղղութիւնները և պաշտօնները էինք ընտրել. նա վաճառական էր դարձել և բաւական հարստացել, իսկ ես՝ հայ դպրոցի ուսուցիչ էի:

Ռուբէնը ամուսնացել էր և ունէր երեխաներ. գիտէի որ մեծ որդուն արդէն գիմնազիա էր տրուել սովորելու:

Աղբիւրի երեսնամեակը իմ մէջ շատ յիշողութիւններ առաջ բերեց. ես յիշեցի մեր պատանեկական կեանքը, դպրոցը, Ռուբէնին. յիշեցի և վճռեցի յիշեցնել նաև մեր այժմեան հարուստ Ռուբէնին՝ նրա այնքան սիրած նոր ընկերի— Աղբիւրի մասին:

Վերցրի Աղբիւրի նոր համարը և գնացի մօտը: Զանգահարեցի. ծառան բաց արեց դուռը, ներս հրաւիրեց: Մի քանի րոպէից յետոյ մենք Ռուբէնի հետ խօսում էինք հնից-նորից:

— Գիտե՞ս, Ռուբէն, ինչու համար եմ ես եկել քեզ մօտ...

— Ո՛չ, չը գիտեմ, ասաց նա զարմացած:

Ես հանեցի իսկոյն Աղբիւրի համարը և տուեցի նրան:

Մ՜խ... Աղբի՛ւր.. ինչքան ժամանակ է որ չեմ տեսել... ասա, խնդրեմ, այժմս էլ Աղբիւրը գոյութիւն ունի՞, հրատարակւո՞ւմ է, ասաց Ռուբէնը թերթելով ձեռքի համարը։

— Այո՛, ինչպէս տեսնում ես, կայ, չարունակում է իր գոյութիւնը, պատասխանեցի ոգեւորւած։ Այս տարի էլ տօնում է իր երեսնամեակը... և ահա ես եկել եմ յիշեցնելու քեզ քո անցեալ «նոր ընկերոջդ» մասին, որ մի ժամանակ այնքան հետաքրքրում էր քեզ, որ մոռանում էիր ինձ ու մեր ուրախ խաղերը։ Ահա այն անկազմ, փոքրիկ, բարակ գիրքը, որից այնքան հետաքրքրական հէքիաթներ, պատմւածքներ էիր անում մեզ...

— Այո՛, այո՛, յիշում եմ. մինչև այժմ էլ դեռ յիշողութիւնից չեն անյայտացել մի քանի ոտանաւորներ, հէքիաթներ. անցեալ օրը դրանցից մէկը պատմում էի Գուրգէնիկիս...

Եւ մենք դարձեալ սկսեցինք վերարտադրել մեր յիշողութիւնները, մեր դասերը, խաղերը, չարութիւնները և այլն։

— Գուրգէ՛ն, Գուրգէ՛ն, ձայն տւեց յանկարծ Ռուբէնը։

Մի ւս սենեակից վազ տւեց մի սիրուն, գանգուր մազերով տղայ՝ գիմնազիական հագուստով։

— Կարդա՛ ի՛նչ է գրած։

— Աղ—բ—իւր.... կարդաց Գուրգէնը։

— Առ այս գիրքը քեզ, դասերից պարապ ժամանակդ կը կարդաս. այս գիրքը քո հայրիկիդ ընկերն է եղել նրա՝ քո հասակիդ եղած ժամանակ. թող լինի և քո ընկերը...

Գուրգէնը վերցնելով գիրքը ուրախ-ուրախ վազեց միւս սենեակը։ Ռուբէնը հանեց գրպանից փողը և տւեց Աղբիւրի բաժանորդագինը։

Ես սեղմեցի նախկին ընկերոջս ձեռքը և դուրս եկայ նրա մօտից։

Ս. քահ. Ասլանեանց.

ՀԱՐՍՆԵԻՈՐ ՈՒՂՏԸ

(Ա Ր Ա Կ)

Գիւղի հարուստ Օհան քեօխ-
վան

Մի օր որդուն պատկեց,
Գիշեր, ցերեկ կեր ու խումով
Ամբողջ շաբաթ անցկացրեց։

Կերան, խմեցին մեծ ու պստիկ
Նրա առատ սեղանից,
Կատուն անգամ ու չալ շունը
Ետ չ՚ձնացին այդ քէֆից։

Բայց տան տէրը շատ մանն
եկաւ

Նաև կորած իր ուղտին,
Որը տանից հեռացել էր
Եւ ներկայ չէր հարսնիքին...

Մէկ էլ յանկարծ, մի օր ահա
Երբ վերջացաւ կեր ու խում,
Մեր խեղճ ուղտը ետ տուն դարձաւ
Գլուխը կախ ու տրտում։

— «Ա՛յ դու իմ ուղտ, ծուռ
ճնացիր—
Ասաց նրան Օհանը,
Ջէիր լսել, այ հէր օրհնած,
Որ հարանիք կար մեր տանը։

Ինչքան քեզի ես ման եկայ
Ինչքան ընկայ դէս ու դէն,
Ինչքան մարդկանց ճար չը ճնաց
Քեզ սար ու ձոր փնտրելէն»։

—«Ինձ ինչ օգուտ քո հարս-
նիքից—
Ասաց ուղտը մեր տրտում,—
Մ՛իթէ, իմ տէր, ես չը գիտեմ
Թէ երբ ես ինձ տեղակում։
Անշուշտ դու ինձ պէտք է անխնայ
Գինի, օղի բառնայիր,
Որ նրանցով քո հիւրերին
Առատ կերպով պատուէիր»...

Պետ. Մոճոռեանց



ՕՀԱՆ-ԱՓՈՒՆ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Տարին շատ ձախորդ դուրս եկաւ։

Գիւղացոց արտերը երկարատև սաստիկ երաշտից վնասուելով շատ քիչ արդիւնք տուին. իսկ աշնան այգեկութին էլ սովորականից աւելի տեղացող յորդառատ անձրևներից խաղողի այգիները ջուրը մաղուեցին—խաղողը բոլորովին փչացաւ։

Գիւղացիներից շատերը ճնացին դառ-ու-դարդակ՝ չոր քարի վրայ նստած, վիզները ծուռ, պըռըշկած ու ձեռքները ծոցը։

Ահա այդ անճար ճնացածներից մինն էր նաև Օհան-ափուն, որ ուրիշ ճար ու միջոց չունենալով՝ սրտի մորմոքով վճռեց իրանց էշը տանել քաղաք ծախել, որպէսզի այդ փողով կարողանայ ընտանիքի անհրաժեշտ պաշարը պատրաստել վաղօրօք, նախքան ձիւն-ձմռան վրայ հասնելը։

Արդէն աշնան վերջերն էր. մի անձրևային օր։ Երբ Օհան-ափուն պատրաստվում էր ճամբայ ընկնելու, նրա մինուճար փոքր որդին աղաչանքով դիմեց նրան.

—Ափու, դէ գոնէ այս անգամ էլ է ինձ տար հետդ... Շատ, է, շատ եմ ուզում քաղաքը տեսնել։

Օհան-ափուի սիրտը շատ էր կոտրած. նա անձնական փորձով գիտէր, թէ ինչ վատ բան է

սիրտը կոտրած լինելը. ուստի-և՝ չնայելով տեղացող անձրևին ու սաստիկ ցեխին, սիրտ չարաւորդու խնդիրը մերժելու, որպէսզի նրա մատղաշ սիրտը չկոտրուի։

Եւ հայր ու որդի էշն աղաք-աղաց—իրանց առջևից քշելով ճամբայ են ընկնում դէպի քաղաք։

Ճանապարհին նրանց պատահում է մի ձիաւոր։ Այդ ձիաւորը հէնց-որ տեսնում է դիմացից եկողներին, ձիու սանձը քաշում, կանգ է առնում, աչքերը չռում ու նայում հօր ու որդուն, նայում, նայում ու մի սարսափելի քրքիջ բարձրացնում և ապա, որպէս-թէ ինքն իրան հետ, բարձրաձայն խօսում.

«Տէր Աստուած, Տէր Աստուած, ո՛րքան տըխմար մարդիկ կան աշխարհիս երեսին։ Թողել են որ էշը դատարկ ու հանգիստ առաջ գնայ, իսկ իրանք մինչև ծնկները խրուած ցեխի մէջ, քաշ են գալիս իշի ետևից»։

Այդ ասում է և ձիուն ասպանդակում-գնում։

«Այո՛, շատ ճիշտ է ասում», մտքում համաձայնում է Օհան-ափուն և որդուն նստացնում իշին»։

Մի կարճ միջոցից յետոյ հանդիպում են մի այլ ճամբորդի։

Այդ ճամբորդը ևս ձիաւորի նման կանգ է առնում. նախ սկսում է ծիծաղել և ապա համ գնում է, համ էլ ինքն իրան հետ խօսում, բայց այնպէս բարձր, որ հայր ու որդի լսում են.

«Ի՛նչ անխելքութիւն. առողջ ու կայտառ որդուն նստացրել է իշին, իսկ ինքը ծեր տեղովը ոտով է գնում։ Վայ, խե՛լքի տոպրակ, վա՛յ»։

Կարօն ճամբորդի այդ նկատողութիւնը լսելուն պէս իսկոյն իջնում է իշից և հօրն օգնում, որ նա նստի։

Հազիւ մի քիչ տեղ անցած՝ պատահում են մի գեղջկուհու, որ մրգով լի կողովը ուսն առած՝ տանում էր քաղաք ծախելու։

Գեղջկուհին հէնց-որ տեսնում է հօրը իշի վրայ, իսկ երեխան այն ցեխին ոտքով նրան հետևելիս, վրդովուած նկատում է գիւղացուն.

—Տնաշէնի մարդ, այդպէս բան կ'անե՞ն, որ դու ես արել. ինքդ առօք-փառօք բազմել ես իշիդ, իսկ մատղաշ երեխայիդ թողել որ այս սարսափելի ցեխին ոտքով հետևի քեզ... Ուղիղն ասեմ, բարեկամ՝ ես իմ օրումը քեզ նման անսիրտ մարդ դեռ չեմ տեսած։

Օհան-ափուն առանց պատասխանելու, սուսուփուս որդուն առնում է գաւակը և առաջուայ նըման էլի առանց շտապելու առաջ են գնում։

Բայց այդպէս դեռ մի փոքր տարածութիւն էլ չէին անցել, որ մէկէլ դրանց առաջ է դուրս գալիս մի հովիւ։ Այդ հովիւն էլ զայրացած ու կրակ-կըտրած բղաւում է գիւղացու վրայ.

—Դու ի՞նչ և իսկ մի վայրենի ես, մի անսիրտ բարբարոս... Միթէ կարելի՞ է այդքան անխիղճ, այդ աստիճան անգութ լինել, ինչպիսին որ դո՛ւ ես։ Աւելնք թէ այդ ողորմելի կենդանին լեզու չունի որ իրա ցաւը յայտնի, բա դու ի՞նչ ես ասում որ երկու հոգով նստել էք վրան, այն էլ այս տեսակ անտանելի ցեխին։ Ամօթ, ամօթ,— ասում է ու գնում դէպի իրա հօտը, որ մի քիչ հեռու շաղ-անցած— ցրիւ եկած մշմշալի արածում էր կանաչկուտում։

Հովիւի այդ անարդարացի յանդիմանութիւնը ևս չկարողացաւ համբերութիւնից հանել Օհան-ափուին, այլ նա առանց վրդովուելու և պահպանելով իր սովորական սառնարիւնութիւնը, իջնում է իշից։

Հօր օրինակին է հետևում նաև որդին, բայց

արմանք-զարմանքից ուղղակի վեր-քաշուած։ Մի փոքր միջոց տարեկուսած լուռ մնալուց յետոյ դիմում է հօրը.

—Ախու, ինչ էլ որ արինք, լաւ դուրս չեկաւ. —որին ծիծաղեցրինք մեզ վրայ, որին բարկացրինք, բա էլ ուրիշ ի՞նչպէս անենք, որ մարդկանց տնա-զատեղ չդառնանք, նրանց չբարկացնենք, նրանց դիւր գանք։ Մենակ մի բան մնաց, այն է՝ իշի ոտ-ները կապոտենք՝ մի ձողի վրայ առած դնենք մեր ուսին և այդպէս մինչև քաղաք տանենք։ Ուղիղ չե՞մ ասում, ախու։

—Այո, որդիս. ում ասես ականջ դնողը ստի-պուած կը լինի այդպէս էլ անելու։ Ո՛չ-միայն շատ դժուար է այնպէս անել, որ կարելի լինի բոլոր մարդկանց դիւրգալ, որ նրանց հաճելի, նրանց սրտո-վը լինի, այլև միանգամայն անկարելի է այդ բանը։

—Ինչո՞ւ պիտի անկարելի լինի։

—Որովհետև ամեն մարդ իրան միայն յատուկ խելքի, մտքի ու ճաշակի տէր է, ուստի-և իւրա-քանչիւրը մի՛միայն իրա խելքի կարածն է լաւ հա-մարում։ Ահա այդ իսկ պատճառով մարդ պէտք է աշխատի՝ երբէք ուրիշների դուդուկով պար չգալ, այսինքն՝ սրա կամ նրա խելքով չշարժուել, այլ սեպհական խելքի կարածն անել։ Օրինակ՝ այսօր մենք փոխանակ մեր սեպհական խելքի թելադրածն անելու, որ աւելի ձեռնտու էր մեզ, միամտաբար թէ յիմարաբար սրան-նրան ականջ դնելով կա-տարեալ խաղալիք դարձանք։

—Այո, ախու-ջան, էլի ամենից լաւն այն է, որ մեր էշն աղաք-արած՝ կամաց-կամաց գնանք մեր ճամբէն։

—Հա՛, որդի-ջան, էլի լաւն այդ է. նախ՝ տնա-զատեղ չենք դառնալ այլևս. երկրորդ՝ մեր համբե-րութիւնը փորձուելեան չի ենթարկուել— ստիպուած չենք լինիլ ամեն յիմարից անարդարացի յանդիմա-նութիւն լսելու, և երրորդ՝ մեր էշը առանց յոգ-

նելու քաղաք հասնելով, գուցէ կարողանանք աւելի լաւ գնով ծախել, ինչ-որ քիչ բան չէ մեզ համար...: Դէ, գնանք, սիրելիս:

—Թո՛ղ ե՛ս,—դրդում է իշին և աղաք-անում ու իրանց ուղին շարունակում:

—Սակայն գիտե՞ս ինչ, Կա՛րօ-ջան,—դիմում է որդուն.—այսօրուայ մեզ հետ պատահածը մինն է այն լաւ-լաւ դասերից, որ իրական կեանքը ինքն է տալիս մարդկանց: Ինչպէս ասացի միքիչ առաջ, ամեն մարդ, ինչքան հնարաւոր է, պէտք է իրա խելքի կտրածն անէ, սեպհական խելքի թելադրածի համեմատ իրա գործերը կարգադրէ, քանի-որ ինքը աւելի լաւ գիտէ թէ ինչ ու ինչ է հարկաւոր և որն է աւելի օգտակար իրան: Բացի դրանից այդպէս անելը, այսինքն սեպհական խելքով գործ բռնելը, ուրիշ երկու լաւ կողմն էլ ունի. մին՝ որ երբ մարդու գործ լաւ վերջանայ, բացի ուրախ լինելուց, նրա գոհունակութիւնն էլ կրկնապատիկ կը լինի...

—Ինչո՞ւ, ախոյ:

—Նրա համար, հո՛գիս, որ այն գիտակցութիւնը՝ թէ գործի այնպէս լաւ վերջաւորութիւնը իրա սեպհական խելքով է եղել, նրան մեծ բաւականութիւն կը պատճառի:

—Հապա եթէ վատ վերջանայ:

—Ահա այդ-ժամանակ էլ պատճառ չի ունենալ իրա խղճի դէմ գնալու, այսինքն՝ փչացած ու անապահով մարդու նման ուրիշներին չի մեղադրիլ՝ ոչ իրա գործի անյաջողութեան և ոչ էլ իր կատարած յիմարութեան կամ արած որևէ վատ ու անպատիւ գործի համար:

Ինչևէ,—խօսքը վերջացնում է Օհան-ախոյն.—կեանքի տուած այս օգտակար դասը երբէք չհանես մոքից դ—չմոռանաս: Դու դեռ շատ չահել ես, կեանքդ սիրեմ, քեզ շատ պէտքը կը գայ:

—Չեմ մոռանալ, ախոյ-ջան:

Լեւոն Մելիք-Աղամեանց

ՋԱՅԼԱՄ

Դպրոցական մեր բաժանորդ օրիորդներից, որ 25 տողով մինչև մայիսի 25-ը նկարագրէ Ջայլամին և մարդկու թեանը ուած նրա օգուտն ու վնասը և գրուածքը տպագրուի ԱՂԲԻՒՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ, կըստանայ մի օրինակ Ոգի Հայաստանի պատկերը, շրջանակի մէջ։

ԲՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Բուսականութիւնը ոչ միայն գեղեցկացնում է բնութեան տեսարանները, ոչ միայն շոյում է մեր հայեացքը կանաչ սաղարթով և գեղեցիկ ծաղիկներով, այլև մաքրում ու թարմացնում է օդը և պարարտացնում հողը։

Մեզ շրջապատող օդը անընդհատ փչանում է մարդու և ընդհանրապէս կենդանի օրգանիզմների շնորհիւ։ Մաքուր օդը ներշնչելով՝ մենք կլանում ենք նրա թթուածնի մի մասը և արտաշնչում ենք ածխաթթուային գազ, որը անպէտք է թէ՛ շնչելու և թէ՛ այրման համար։ Եթէ օդի մէջ $10^0/_0$-ից աւելի ածխաթթուային գազ է լինում, մարդիկ և կենդանիները մեռնում են։ Մեռած կենդանիներն ու բոյսերը՝ փթելով ու լուծւելով՝ աւելի ևս աղտոտում են օդը, հողը և ջուրը։ Լուծւելով՝ նրանք գոյացնում են ածխաթթուային գազ և ուրիշ գարշահոտ և խիստ վնասակար արտադրութիւններ։

Ջր հոսող ճահիճների մէջ ջուրը հէնց այն պատճառով է ունենում այնպիսի վատ հոտ, որ յատակում փըռւած են լինում լուծւող բոյսեր և կենդանիներ։ Եթէ բոլոր վնասակար արտադրութիւնները չ'ոչնչանային, այն ժամանակ կեանքը անհնարին կը դառնար երկրագնդի վրայ։ Սակայն այդ բանը տեղի չի ունենում՝ շնորհիւ այն հանգամանքի, որ աղտոտման հետ միասին տեղի է ունենում մաքրման անընդհատ գործողութիւնը։ Այդ բանով մենք պարտական ենք բուսականութեանը։

Բոյսը կլանում է ածխաթթուային գազը, որ նրանից ածխածին պատրաստէ. բոյսը միայն ածխաթթուային գազից է ածխածին պատրաստում՝ քլորոֆիլլ անունով յատկանի կանաչ նիւթի օգնութեամբ։ Ածխաթթուային գազից ածխածինը հանելուց յետոյ՝ նրա միւս բաղադրիչ մասը—թթուածինը՝ ազատւելով՝ անցնում է մթնոլորտի մէջ։

Բաց օդի մէջ, հանդարտ եղանակին, ածխաթթուային գազ ամենից շատ պատահում է բարձր լեռների գագաթներին, որոնք գուրկ են լինում բուսականութիւնից։ Օդափոխութեան չենթարկւող փակ բնակարաններում նոյնպէս մեծ քանակութեամբ ածխաթթուային գազ է լինում. այդ պատճառով շատ օգտաւէտ է այդպիսի սենեակներում ծաղկամաններով բոյսեր ունենալ, որ նրանք կլանեն ածխաթթուային գազը։

Բայց բոյսը իր շնչառութեան ժամանակ ածխաթթուային գազը կլանում է միայն ցերեկը, երբ արեգակը լոյս է տալիս. իսկ գիշեր ժամանակ բոյսերը ևս ածխաթթուային գազ են արտաշնչում, ինչպէս և կենդանիները. այդ պատճառով չը պէտք է ննջարաններում բուսականութիւն պահել։

Բուսականութիւնը մաքրում է ոչ միայն օդը, այլև հողը։

Այսպիսի մի փորձ է տեղի ունեցել։ Մի գիւղում ջրհորի ջուրը անպէտք էր դարձել խմելու համար այն պատճառով, որ նրանից ոչ հեռու գտնւում էր աղբահարի փոսը։ Այդ պատճառով գիւղացիք մի շարք ծառեր տնկեցին այդ ջրհորի և աղբահարի մէջ տեղը։ Մի քանի տարուց յետոյ ջրհորի ջուրը բոլորովին անվնաս դարձաւ՝ չնորհիւ այն բանի, որ ծառերի արմատները իրանց սնունդի համար ծծում էին վիթած ու հոտած աղտեղութիւնները։ Ո՛չ մի արհեստական քամիչով չէր կարելի այնպէս քամել ու զտել աղտեղութիւնները, ինչպէս անում էին ծառերի արմատները։

Բուսականութիւնը վերին աստիճանի բարերար ազ-

դեցութիւն է անում նաև օդի ու հողի խոնաւութեան ու բարեխառնութեան վրայ։ Տերևների մակերևոյթից շարունակ գոլորշի է բարձրանում։ Որովհետև տերևների ընդհանուր մակերևոյթը շատ մեծ է, այդ պատճառով գոլորշիացումն էլ շատ մեծ է լինում։ Որոշել են, որ մի մեծ ծառից մի օր ու գիշերւայ ընթացքում գոլորշիանում է մօտ մի վեդրօ ջուր։

Եթէ օդի մէջ 40%-ից քիչ է լինում խոնաւութիւնը, մարդու շնչառութիւնը դժւարանում է։ Խոնաւութեան պակասութիւնը նկատւում է բուսականութիւնից զուրկ տեղերում։ Իսկ անտառներում, պարտէզներում ու պուրակներում օդը միշտ բաւականաչափ խոնաւ է լինում. այդ պատճառով էլ այդպիսի վայրերում մարդ թեթև է շունչ քաշում։

Թէև անտառներում բուսականութիւնը պէտք էր որ արագութեամբ կլանէր ջուրը, և հողը ըստ երևոյթին պէտք էր արագութեամբ չորանար այդ պատճառով, սակայն այդպէս չի լինում։ Ծառը իր սննդի համար խոնաւութիւն է վեր քաշում ոչ թէ հողի վերևի շերտերից, այլ որոշ խորութիւնից։ Հողի վերևի շերտը՝ բացի դրանից՝ միշտ գտնւում է ծառերի ստւերում և ծածկւած է լինում թափւած տերևներով. այդ պատճառով հողի վերևի շերտը անտառներում աւելի երկար է պահպանում խոնաւութիւնը, քան անտառազուրկ տեղերում։

Անտառազուրկ տեղերում անձրև աւելի քիչ է դալիս, քան անտառապատ վայրերում, որտեղ առատ գոլորշիացումներից գոյանում են անձրևաբեր ամպեր։ Երբ օդը չոր է լինում, ամպի մէջ պարունակւող խոնաւութիւնը չի կարողանում թանձրանալ և անձրևային կաթիլների վերածւել, այլ ցրւում է օդի մէջ, ինչպէս գոլորշի։ Իսկ անտառում օդը բաւականաչափ խոնաւ է լինում. ուստի ամպերը անտառում թանձրանալու յարմար միջավայր են գտնում և այդ պատճառով այնտեղ յաճախ տեղում է անձրև։ Ահա ինչի՛ անտառապատ վայրերում այնքան շատ են

ՄԱՐԴԱՊՍԱՆՆԵՐ

լինում աղբիւրները, իսկ անտառների ոչնչացնելուց նրանք չքանում են և նւազում են գետերը։

Բուսականութիւնը չափաւորում է օդի բարեխառնութիւնը։ Ամառը անտառում աւելի հով է լինում, քան բաց տեղերում։ Իսկ ձմեռը՝ ընդհակառակը՝ անտառի խոնաւութիւնը պահպանում է տաքութիւնը։

Ձափազանց խիտ շոգերի և ցրտերի այդ բացակայութիւնը բարերար կերպով է ազդում ինչպէս մարդկանց առողջութեան վրայ, այնպէս էլ բուսականութեան վրայ։

Անտառային օդի մէջ շատ ազօտ է պարունակւում։ Եթէ օդի մէջ թունաւոր գազեր են տարածւում փխող գործարանաւոր նիւթերից, այն ժամանակ ազօտը նրանց թթւեցնում է, կամ, ուրիշ խօսքով ասած, նրանք այրւում են և դադարում են թունաւոր լինելուց։

Այն բուրաւէտ խէժերը և այլ նիւթերը, որ գտնւում են մանաւանդ փշատերև անտառներում, շատ օգտաւէտ են թոյլ կրծքի տէր հիւանդների շնչառութեան համար։ Այդ պատճառով էլ սանատօրիում անունով յայտնի բուժավայրերը շինում են փշատերև անտառներում, ինչպէս օրինակ, Բօրժօմի, Բակուրիանիի, Աբասթումանի և ուրիշ նման անտառներում։

Ճահճային տեղերում, որտեղ մարդիկ հիւանդանում են ջերմ ու տենդով, բուսականութիւնը առողջացնում է օդը։ Այդ նպատակով խորհուրդ են տալիս ճահճային տեղերում ցանել արագ աճող բոյսեր, այն է՝ գայլուկ, եղեգն, արևածաղիկ և այլն։

Մի ճահճային տեղ մարդիկ խիստ տանջւում էին ջերմախտից. բնակարանների շուրջը, 30—40 սաժէն հեռաւորութեան վրայ, արևածաղիկ ցանելուց յետոյ ջերմախտը անհետացաւ. իսկ այն տներում, որոնց շուրջը չէը ցանւած այդ բոյսից, ջերմախտը շարունակւում էր։

Բուսականութիւնը մեզ պաշտպանում է փոշուց ու մրից։ Ամեն մի մարդ, որ այգի կամ պարտէզ ունի իր տան շուրջը, լաւ գիտէ, որ ծառերը՝ մեր բնակարանները

բաժանելով փոշոտ փողոցից, ճանապարհից կամ ծխառատ գործարաններից՝ մեզ ազատում են փոշուց ու մրից։ Փոշին ու մուրը նստում են տերևների վրայ, ապա անձրևը լւանում է այդ փոշին ու մուրը և շնորհիւ դրան՝ նրանք չեն մտնում մեր թոքերի մէջ։

Փոշին ու մուրը միասակար են ոչ միայն նրանով, որ ներս են թափանցում մեր շնչափողի ամենամանր ճիւղաւորումների և թոքերի ցնցուղների մէջ ու աղտոտում են նրանց, այլև պարունակում են իրանց մէջ ամեն տեսակի միասակար մանրէներ (միկրօբներ)։ Այդ պատճառով փոշին ծառայում է, իբրև վարակիչ հիւանդութիւնները տարածելու գլխաւոր միջոցներից մէկը։

Այստեղից հասկանալի է, թէ որքան կարևոր և անհրաժեշտ է ծառ տնկելը։

Ամենից առաջ—մաքուր օդ և լաւ ջուր։ Ահա ինչի՛ մեծ քաղաքներում լաւ այգիներ, պուրակներ, ճեմելիքներ, նաև ջրանցքներ ու ջրաքամիչներ են շինում և այլն։

Դիժբաղդաբար բուսականութեան օգուտն ու նշանակութիւնը ամենքը չեն ըմբռնում։ Շատերը ոչ միայն չեն պահպանում ու գարգացնում բուսականութիւնը, այլ ընդհակառակը ոչնչացնում են անտառները։

Ամերիկայի գաղթականները՝ վարելահողերի տարածութիւնը մեծացնելու համար՝ կտրատում ու այրում էին անտառային ահագին տարածութիւններ։ Սկզբից թւում էր, թէ ամեն բան կարգին է գնում. արգաւանդ դաշտերը ընդարձակւում էին ամեն ուղղութեամբ և ահագին հունձ էին տալիս։ Շուտով սակայն երևան եկան անտառները ոչնչացնելու ճակատագրական հետևանքները։ Կլիման փոխւեց դէպի վատը. ձահիճներ գոյացան այնպիսի տեղերում, որ առաջ չայանի էին իրանց չորութեամբ և առողջարար կլիմայով։ Մաստիկ ու հեղձուցիչ քամիները, որ այլևս արգելքի չէին հանդիպում անտառների կողմից, աւելի ու աւելի յաճախ էին ոչնչացնում ցանքսերը։

Ամերիկացիք յետոյ հասկացան, որ անտառները փը-

չացնելով՝ շատ մեծ սխալ են գործել, այդ պատճառով նրանք սկսեցին ուղղել իրանց սխալը։ Այս գործում ահագին դեր խաղաց մասնաւոր նախաձեռնութիւնը։

1872 թ-ին մի հասարակ ագարակատէր, Ստէրլինդ Մօրտօն անունով, մի ընկերութիւն հիմնեց «Ծառերի Տօն» անունով և մի ջերմ կոչով դիմեց իր հայրենակիցներին, որոնք հէնց սկզբից արձագանք տւին նրա այդ կոչին։ Մօրտօնի հիմնած ընկերութեան ամեն մի անդամ պարտական էր իւրաքանչիւր տարի մի դօլլար (մօտ 2 րուբլի) վճարելու՝ արհեստական անտառ գոյացնելու ծախսերի համար և, բացի դրանից, ինքը պարտական էր իւրաքանչիւր տարի երկու ծառ տնկելու։

Ամերիկացիները այնպիսի եռանդով դիմեցին այդ գործին, որ մի քանի տարւայ ընթացքում տնկեցին հարիւրաւոր միլիոններ հասարակ ու պտղատու ծառեր։ Ներկայումս Ամերիկայից արտահանւում է դէպի Եւրոպա հարիւր հազարաւոր փութերով չորացրած պտուղ և փայտից շինած արժէքաւոր իրեր։

Առաջին անգամ Նեբրասկա նահանգում (Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից մէկը) սկսեցին իւրաքանչիւր տարի «ծառատունկի տօն» կատարել։ Այդ օրը ոչնչ ուրիշ գործով չի զբաղւում՝ բացի ծառ տնկելուց. ամեն մարդ պարտաւոր է ծառ տնկել—ի յիշատակ Ամերիկայի այս կամ այն հռչակաւոր գործիչների—զօրապետների, բանաստեղծների, գրողների, քաղաքագէտների և այլն։ Բացի դրանից՝ այդ օրը մասնագէտներից բաղկացած մի առանձին յանձնաժողով պարգևատրում է այն քաղաքացիներին, որոնք ուրիշներից աւելի են ծառ տնկել ու խնամել և իրանց օրինակով նպաստել են ծառատնկութեանը։

Ծառատունկի գեղեցիկ սովորութիւնը Ամերիկայից անցաւ Եւրոպա, ապա՝ Ռուսաստան և մեր Կովկասը. բայց մեզանում դեռ ցանկալի չափով չէ տարածւած։ Մեր ժողովուրդը դեռ այնքան քիչ է գիտակցում բուսականու-

թեան կարևոր նշանակութիւնը, որ ոչ միայն չի նպաստում նրա զարգացմանը, այլ նոյն իսկ մինչև հիմա էլ շարունակում է անտառները ոչնչացնել։ Գերմանիայի շատ քաղաքների փողոցներում պտղատու ծառեր են լինում՝ ծանրաբեռնուած պտուղներով, և ոչ՛ք չի դիպչում նրանց ոչ ցերեկը, ոչ գիշերը։ Իսկ մենք կրթական կողմից այնքան յետ ենք մնացել, որ առանց կարիքի կոտրատում ու ոչնչացնում ենք ծառերը...

Ամեն մարդ պէտք է մատաղ հասակից սովորութիւն դարձնի և մի տեսակ պարտք համարէ ծառեր տնկելու և խնամելու։ Իւրաքանչիւր անհատ պէտք է մանուկ հասակից իր մէջ զարգացնի սէր դէպի բնութիւնը, դէպի ամեն մի կենդանի էակ—թէ դէպի կենդանիները և թէ դէպի բուսականութիւնը, որը ահագին նշանակութիւն ունի նաև ազգաբնակութեան տնտեսական կեանքում։

Հ. Ց.—Գ.

Ա Ի Ա Ր Ա Յ Ր

(Պատմական քերթված)

(Սկիզբը Աղբիւր № 3)

V

«Ողջոյն քաջաց». այս լսեցին, և այն էլ հայ բարբառով։
Ի՜նչ հիացմունք. Պարսկաստանում, սև բանտի մէջ, գիշերով՝
Հայ են տեսնում աչքի առաջ, ո՛չ, երազ է կամ անուրջ.
Ո՞րտեղից այդ, երբ հսկում են չար թշնամիք աչալուրջ։
«Մի խռովիք. եկայ այստեղ ձեզ ցույց տալու մի հնար.
«Հայ եմ ձեզ պէս, բայց պահում եմ իմ կրօնը ծածկաբար,
«Պատրաստուում են այս առաւօտ ձեր կեանքներին վերջ տալու,
«Եւ վիթխարի փղերն առած գնան երկիրն աւերելու։

VI

«Թէ առերես դուք կատարէք բռնակալի չար կամքը,
«Ձեռք կըբերէք հայրենիքի փրկութիւնը՝ ձեր կեանքը,
«Եւ դառնալով սիրելեաց մօտ՝ դուք կսրբուէք արատից։
«Եւ կըկորզէք հայրենիքը անդառնալի կորուստից։
«Դէհ, վճռեցէք»—վերջացրեց գիշերապահն իր խօսքեր
Եւ դուրս գնաց, որ առանձին խորհուրդ անեն հայ քաջեր։
Շուարած հայ իշխանները քարացել են տեղներում,
Երազ էր այս, թէ իրական, նոքա դեռ չեն իմանում։

VII

Հիացմունքի ժամը անցաւ, ուշքի եկան բոլորով.
Այդ երազ չէր. նրանք արթուն են, և տեսնում են աչքերով։
Բայց անորոշ կռիւ ծնաւ նոցա յուզուած սրտերում.
«Այդ խորհուրդը մեր քաջերին այնքան էլ հեշտ չէր թըւում։
«Դէհ, վճռեցէ՛ք». դեռ հնչւում են այդ խօսքերը բանտի մէջ,
Իսկ քաջերի միտքն անում է անվերջ կերպով ել և էջ.

Ի՞նչ, ուրանան կրօն, հաւատ՝ անցաւորը փրկելու,
Բայց այդպիսով արդարների վարձիցը չե՞ն զրկւելու։

VIII

Ո՞վ պիտի խօսէ. սպասում են մխիթանց ուղղած աչերըն հէգ.
Բայց ձայն չկայ. միայն նորից կրկնւում է «վճռեցէք»...
«Եկէք վճռենք».-այդ Վարդանն էր, որ ընդհատել է լռութիւնն,
Բայց ձայն չեղաւ. կրկին մնաց միևնոյն անդորը դըրութիւնն.
Դեռ մտքերը մաքառում են երկմտութեան մութ ծովում,
Անվերջ կերպով նոցա հոգիք տատանւում են, խռովում...
Կրկին լսուեց դռան ճռինչ, դահիճներ ներս մտան.
Սոսկալի ժամ, դեռ չգիտեն՝ ինչ պատասխան պէտք է տան։

IX

Ի՞նչ. լուռ ու մունջ պէտք է կանգնեն անգութ դահճի սրի տա՞կ.
Ու անտէրունչ Հայաստանը պէտք է լինի ոտնատակ.
Օ՜հ, դժուար է վերջին միտքը, քան թէ մահուան տագնապը.
Էլ չեն զգում թշուառները դոռ հարուածի սարսափը։
«Մինչ ե՞րբ լռէք. ժամն է հասել, վճռենք յօգուտ հայրենեաց».
Քաջ Վարդանը կրկին դիմեց ընկերներին շուարած։
Վճռենք յօգուտ հայրենեաց... ով կընդդիմանայ այդ վճռին,
Որ փրկում է Հայաստանը և անտէրունչ խեղճերին...

X

Ոսկեճաճանչ գահի վերայ՝ յոյզերի մէջ ու վհատ,
Պարսից արքան վայր է ընկել և հառաչում է յուսահատ.
Նա տեսնում է՝ իւր յոյսերը խորտակւում են այդպէս վաղ.

Երերուում է, բայց ելք չկայ, կրկին քաշում ահ ու վախ։
Ցոյներն եկան, յոյներն եկան... թէ երկինքը խորտակուէր,
Թէ ամպրոպի կայծակներից չար գազանը շանթարկուէր,
Հազար անգամ լաւ կլինէր, քան կիսամահ չարչարուել
Եւ անդադար տագնապի մէջ՝ վառ բոցերով տոչորուել։

XI

Հայց արքային ցնորուելուց պահպանում է դեռ մի յոյս.
Օ՛, թէ հայոց իշխանները խելքի գային մինչև լոյս,
Ատրուշանում թէ ծնկաչոք սուրբ կրակին զոհէին,
Այն ժամանակ նա ցոյց կտար իւր թշնամի յոյներին։
Ծոցուած արքան աչերն յառած՝ այդ լուրին է սպասում
Եւ հէնց այժմուստ իւր մտքի մէջ պարգևները է պատրաստում.
Դուռը բացուեց և, ով զարմանք, «պատրաստ են քեզ լսելու»—
Արքան լռեց։ Նա բաղձանքին հասնելու է հասնելու...

XII

Ընճիռները անհետացան, փայլեց ժպիտ չար դէմքին,
Ուրախութիւն և սփոփանք նորա հոգին գրկեցին.
Նա մոռացաւ այն թախիծը, որ տանջում էր չարաչար,
Թափառում է անուրջներում, գտնում մարդիկ անհամար։
Ցոյների հետ կռիւ տալուց էլ մեր արքան չի սարսում,
Ողջ աշխարհը նուաճելու խորհուրդներ է երազում։
«Այստեղ բերէք իմ քաջերին», կանչեց արքան սրտագին.
Այստեղ բերէք ոսկի, արծաթ և պարգևներ թանկագին»։

((Կը շարունակուի)

Ց. Պետրոսեան

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

(Արտասանուած Թիֆ. Ժողով. մարտի 12-ի համերգին).

Ձեուիցդ լսեց «Մեր հայրենիք» երգի ձայնը, կարա-Մուրզայի ներդաշնակած այն եղանակը, որը 30 տարուց ի վեր շարունակ և անվերջ այնքան է բաղխւել հայութեան ականջին, որ հանրածանօթ է ամենքին։ Մեծ

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ

հեղինակ Միքայել Նալբանդեանցի սրտի զեղմունքի այս արտադրութիւնը կարա-Մուրզայի ներդաշնակութեամբ այնպէս է հռչակւել ու տարածւել, որ մարդ չըկայ, աշակերտ չը կայ, որ ծանօթ չը լինի այդ երգի բառերի ու եղանակի հետ։

Ուշադիր լսողին թւում է, թէ հեռւից ռազմաչուխ է կազմւած, գնում են հեծելազօրներն ու հետևակներն ահեղադղորդ բովբիւններով։ Զօրականների զէնքերի շաչիւնից, զինւորների չուերգից, ձիերի սմբակների բամբիւնից, խրխնջոցից ու փռշտոցից այնպիսի սարսափելիւռ աղաղակ է բարձրացել, որ կարծես ամենքը մի կողմն են քաշւում, ճանապարհ հարթում, որ անցնի այդ ռազմընթացքը։ Այդ երգի ելևէջները այնպէս են փոթորկում ունկընդրի սիրտը, որ նա շնչակալ լսում է մեծ ուշադրութեամբ, ականջները թէքած հետևում է իւրաքանչիւր ձայնի բաղխիւններին և երկար հետամտելուց յետոյ, նա ուշքի է գալիս, զգում է, որ այդ ձայնը ռազմի կոչ չէ, դա արիւնհեղութեան գնացողների բարձրացրած աղաղակ ու վայնասուն չէ։ Ո՛չ, դա ռազմիկների չուերգը չէ։

Լսողը ենթադրում է, թէ դա բարձր լեռնից, խոր խոր ձորից վար իջնող մի մեծ հեղեղի շաչիւն ու շառաչիւնն է, որ կատաղի ու փրփրալի հոսանքը բախւելով ժայռերին, ապառաժ կողերին, բարձրացնում է ահեղ գոչիւններով։ Կայծակի արագութեամբ հոսող վարարած գետը—ահեղագոչ հեղեղն է, որ գալիս է, գալիս մռնչելով, փռնչելով և գոչելով։

Այս աղաղակի ներգործութեան տակ մարդ շշմած մտածում է, թէ դա ինչ հեղեղ է։ Արդեօք դա այն սառցապած Զաթը-Դաղի գագաթից պոկւած ձիւնի կտորը չէ, որ գլորւելով-գլորւելով մի լեռնանման կոյտ էր դարձել և եկել ընկել էր Ղարասու Բազարի ձորը։ Այդ այն սառցակոյտ շեղջը չէր, որ տիրացու Կարապետների և տիրացու Յաչատուրների վառարանում տաքացաւ, հալւեց ու յանկարծակի այնպէս սլացաւ դէպի ծով, որ փոխանակ Պոնտական ջրերին խառնւելու, իր ահեղ սահանքով անցաւ Կովկաս, որ ոռոգէ ու հեղեղէ 40—50 քաղաք իր անմահական վճիտ ջրերով, իր երգերով ու եղանակներով։

Արդեօք Արագածից—Արարատից և Բիւրակնից դէպի Պոնտական հոսող ջրեր չէին դրանք, որ ծովից անցնելով

տեղ էին գտել Տաւրիկեան լեռներում, դիզւել, կուտակուել էին, մի օր դարձեալ Կովկաս անդրադառնալու համար։ Արդեօք դա այն կուլտուրան չէր, որ հայ աշխարհի բնիկները, հալածւած բարբարոս ու բռնակալ դրացիներից և նրանց ասպատակներից, առել տարել էին Ղրիմ, որպէսզի այնտեղ կատարելագործւի և մի օր դարձեալ վերադառնայ իր բնավայրը։ Արդեօք դա այն արևելեան եբրաժշտութիւնը չէր, որ Անիից Ղրիմ էին փոխադրել, տիրացու կարապետներն ու Ղաչատուրները մշակել, վարշաւի կօնսերւատորիայում կոկել և մարմնացրած դրել էին իրենց սան Ղաչատուրի կրծքում՝ Կովկաս—բնիկ երկիր փոխադրելու համար։

Ինչպէս որ 7-ից մինչև 12-րդ դարը հայ ճարտարապետութիւնը աշխարհակալեց դէպի Միջագետք, Սուրիա, Եդիպտոս և Մաւրիտանիա, ու 13-րորդ դարում անդրադարձաւ նորանոր դարձւածներով դէպի մայր երկիր, արդեօք Ղրիստաֆորի միջոցով միևնոյն երաժշտական անդրադարձութիւնը չը կատարւեց՝ Ղրիմից—Կովկաս։

Եւ այդ ահեղ փոթորկի առաջ պատնէշ բարձրացնելու էին եկել ազգականներ, բարեկամներ, արիւնակիցներ. հակառակորդները և նախանձորդները, որպէսզի փոխևն այդ հոսանքի ճանապարհը։ Բայց վարարած հեղեղի ահեղասլաց հոսանքի դէմ պատ ու պատւար երբ կարող է դիմանալ։ Միաձայնութեան, սուր սուր ելևէջների, կոկորդի ու ռնգի ձայնի սիրահարները ուզում էին կասեցնել այդ հոսանքը։ Բայց ո՛վ կարող էր դրա դէմ մաքառել։

Եւ երբ այս խոհերով տարւում ենք, այլևս փոխանակ հեղեղի և հոսանքի զարհուրելի շաչիւնը լսելու, մեր ականջին է գալիս մի բոցակալած հրդեհի ձայն, մի մեծ հրդեհ, ուր ոչ թէ բոյս ու կենդանութիւն է այրւում, այլ մարդկային հոգիներ։ Եղևնի ծառի հրդեհի նման բոցակալած մի կրակ, որ չի այրում ծառը, այլ բորբոքում է մարդու սիրտն ու գանկը։ Մի հուր, որով բռնկւած են ամեն մի քաղաքում, մեծ թէ փոքր, այր թէ կին, մանուկ

թէ տղայ։ Ամեն տեղ—եկեղեցու և թատրոնի բեմից սկսեալ, ուսումնարան թէ տուն, հարսանիք թէ զբօսավայր երգում են քառաձայն և ներդաշնակ, որով մարմնացած ոգևորութիւնը նպատակին հասած, փոխանակ հանգստանալու, նա աւելի եռանդով վազում է աջ ու ձախ, մէկ բարձրանում Շուշու լեռները համերգ կազմելու, մէկ էլ իջնում է Նուխու հովիտը։ Գնում է Արաքսի ձորը Իգդիր ու Կաղզման, անցնում է Գոնտոսն ու Կասպիականը, հասնում է Սիմֆէրոպոլ ու Աստրախան։

Կարա-Մուրզան, երաժշտութեան այդ քրմապետը վիշապաթևերով սաւառնում է ամեն տեղ, ամեն կողմ, քաղաք թէ աւան և ամեն մի հայաբնակ վայրում քառաձայն խմբեր է կազմակերպում։ Նա մարմնացած ոգևորութեան հետ, մարմնացած եռանդ է. երեք-չորս օր և ահա 50—100 հոգուց կազմւած խումբը պատրաստ է բեմ բարձրանալու և ժողովրդին կրթելու։

Ինչպէս քառաձայն—ներդաշնակութեամբ սուր ու գոշ ձայներն էր փափկացնում ու քաղցրացնում, այնպէս էլ սիրազմայլ եղանակներով հոգին էր կրթում։ Նա Ուրմից կովկաս չէր եկել զարթացնելու, հաճոյանալու, սրանց միջոցով հաճոյք ու զւարճութիւն բերելու, այլ ներդաշնակ երգերով ոգևորելու, կենդանացնելու և բարեկրթելու։ Նա անձն ուրացել էր, կեանքը զոհել էր միմիայն մեր բարքերը բարեկրթելու, մեռելութիւնից սթափեցնելու և այդ նպատակին էլ հասած միայն հեռացաւ մեզնից։

Կարա-Մուրզան, այն եռանդն ու ոգևորութիւնը չէր կարող մեռնել, նա անմահացաւ յաւերժական յիշատակ թողնելով յաջորդ մատաղ սերնդի սրտում։ Նրա անմահութեան վկան այսօրւան այս խուռն բազմութիւնն է, որ եկել է նրա մահւան տասնամեակը, նրա յիշատակը յարգելու, նրա երգերը լսելով նորանոր մխիթարութիւն, եռանդ ու ոգևորութիւն ստանալու. նա չի մեռնիլ, քանի հայութիւնը գոյութիւն ունի, քանի հայութեան մէջ երգն ու նւագը օրէցօր ծաղկում ու զարգանում է։

Բառերն ու խօսքերը չեն, որ նրա անմահութիւնն են հաստատում, այլ հանդիսականներիդ սրտերը, որոնք ուրախութեամբ զեղուած տրոփում են Կարա-Մուրզայի ա-նունով, նրա յիշատակով, նրա թողած երկերով և նւագ-ներով։ Քանի կենդանի է այդ զգացումները հայութեան սրտում, քանի որ նա չի մոռանում իր երախտաւոր աշ-խատաւորներին, քանի որ նա խրախուսում է մշակներին, Կարա-Մուրզան անվերջ կայ ու կը մնայ ամենի սրտում իր եռանդուն ոգևորութեամբ։

Ատրպետ

ԲԱՌԱԹԱՂԵՐ

1. Հինգ տառանի, երկու վանկանի մի ամենապէտքական պիտոյք եմ։ Եթէ մէջտեղիս տառը կպցնէք առաջին վանկին, այն ժամանակ առաջին վանկս կը դառնայ մի հին երկիր, իսկ երկրորդս—անգին քար, իսկ եթէ նոյն մէջիս տառը կպցնէք երկրորդ վանկիս—առաջինս կը լինի ցուցական դերանուն, երկրորդս—ածանցական մասնիկ։ Ապա փորձէք խօսքիս սկզբում դնել «ա» տառը և աջից ձախ կարդալ, հետևապէս ինձ Հիւսիսային Ամերիկայում կը գտնէք։

2. Առաջին վանկս զէնք է, երկրորդս՝ արօտատեղի, երրորդս՝ անիւի մասնիկ, իսկ ամբողջս նաժակաբեր է։

ՏԱՌԵԽԱՂ

3. Ես Թւական անուն եմ, փոխէք իմ մի տառը, ածական անուն կը դառնամ, մէկ էլ որ փոխէք—նաւի վրայ կը լինեմ։

Գրիգոր Ե. Էփրիկեան

ՎԱԳՐԸ

Ով մինչև մայիսի 20-ը նկարագրի վագրը և գրւածքը տպագրւի ԱՂԲԻՒՐՈՒՄ, կըստանայ 10 գիրք։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՓԱՅԼԱՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ (ՏԱՐԱԶ № 4)

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ ԱԼՄԱՆԱԽ

Գինը 2 ր., Աղբիւրի բաժանորդների համար 1 ր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ

. Սունդուկեանց (1911 թ. գարնան, պարահրոմ)
Կաուս—Մարդ Աստուած
Ինաթիևա, Դ. Սունդուկեանցի մայրը.
Իքայէլ, Դ. Սունդուկեանցի եղբայրը.
Լիսիսէ, Դ. Սունդուկեանցի քոյրը.
սբրիել Սունդուկեանց ուսանող.
ֆիա և Դ. Սունդուկեանցները, ամուսնութեան տարին.
Գորդ
էքսանդը } Դ. Սունդուկեանցի որդիքը
կրտում
սբրիել Սունդուկեանց, հայր
ւ. Նունէ
ւ. Թինաթինա } Դ. Սունդուկեանցի աղջկերքը,
ւ. Եկատերինէ
սբրիել Սունդուկեանց, հայր
ւ. Հեղինէ
զինի } Դ. Սունդուկեանցի թոռները,
սբրիել
սբրիել Սունդուկեանց, պապ
Վիտման
N } կովկ. հանք. ջրերում.
Սունդուկեանց
ւ. Լեսիչինսկայա, Դ. Սունդուկեանցի բարեկամուհին և աշակերտուհին.
սբրիել Սունդուկեանց ալեզարդ
սբրիել Սունդուկեանց չալ փափաղով.
սբրիել Սունդուկեանց, լուսանկար. 1911 թ. աշնան
սբրիել Սունդուկեանց, պետական պաշտօնեայ.
Սօֆիա Սունդուկեանց, վերջին լուսանկար.
Սունդուկեանց և Թատրոն. գործիչներ.
սբրիել Սունդուկեանց ծերունազարդ.

ՊԻՍՕԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԴԵՐԵՐՈՒՄ

նեմիա՝ Սաֆենիկ Ջմշկեան
պուլի՝ Սիմէոն Հախումեան.
ուլի՝ Ամիրան Մանդինեան.
քօ՝ Գէորգ Տէր-Դաւթեան.
ւշան՝ տ. Վարդուհի.
ւօ՝ Գէորգ Ջմշկեան

ԴԻՇԵՐԻԱՑ ՕԱԲՐԸ ՄԷՐ Է ՎՈՏՐԻԻԼՈՒՄ

նացու՝ Մակար Ջմշկեան, 1874 թ.

ԵԼԻ ՄԵԿ ՋՈՀ ԿԱՏԱԳԵՐԿՈՒԹԻՒՆՈՒՄ

տերասէրները Պետերբուրգի բեմի վրայ 1894 թ.

Ազգային քէֆ.
Դաբրիել Սունդուկեանցը դադաղում.
Պէսօներ — դագաղակիր Դ. Սունդուկեանցի բաց գերեզմանը շրջապատած.

FAC - SIMILE-ՆԵՐ

Դաբրիել Սունդուկեանցի ձեռագիր ԱՄՈՒՍԻՆՆԵՐ նէ
Սօֆի-Ջանին՝
Պէսօն ուղղած 4-րդ տպագրութեան համար, նէր
Նունէին.
Բօսուս յիշատակը Դ. Սունդուկեանցին.
Գէորգ Ջմշկեանի յիշատակը Դ. Սունդուկեանցին.

ՆԻՒԹ

Ուտհնու ճիւղը . . . . . Տ. Նազարեան
Դաբրիել Սունդուկեանց՝ . . . . . Բժշ. Ռ. Նաւասարդ
Առեղծադրծող ոգին . . . . . Մուսեան
Սունդուկեանցի կրօնասիրութիւնը . . Ս. Մանդինեան
Թէ ինչպէս գրուեց Բանդած օձաքը... Ց. Տէր-Դրիգոր
Բանդած օձաքի առաջին ներկայացումը Ա. Քիշմիշեան
Վշտի ծիծաղը . . . . . N
Դաբրիել Սունդուկեանցը և Օստրովսկին Ց. Սպենդիար
Հայկ. դրամատուրգիայի հիմնադիրը . . Լ. Մանուէլեան
Դ. Սունդուկեանցը և հայ կինը . . . . Ց. Սօլօվեան
Դ. Սունդուկ. ընտրաշումը իր կտակով . Լէօնիդ
Դու չես մեռել . . . . . Յար. Թումանեան
Ձօն . . . . . Ես.
Պէսօ . . . . . Գ. Սուցեվ
Պէսօ (Յիշողութիւններ) . . . . . Ամ. Մանդինեան
Պէսօին . . . . . Աշուղ Հազիր
Պէսօի բռնած մուռծեքը . . . . Դիքօ-Գ. Տէր-Դաւթեան
Եթիմ բլբուլ . . . . . Գ. Մրբուռեան
Դիշերւայ ոաբրը խէր է (Յիշող.) . . . Մ. Ջմշկեան
Իմ էպպամէնը . . . . . Դեր. Վարդան
Ի՞նչ, ինչ (Յիշող.) . . . . . Աշուղ Հազիր
Սունդուկեանցը բեժիսօր. . . . . Ա. Սար. Արեա
Զհոգին մի չիշուցանէք . . . . . Բենիկ վարդան
Գաբրիել Սունդուկեանց . . . . . Շիրվանզադէ
Կակուլու վերջին մնաս բարովը . . . Կակուլի
Դ. Սունդուկեանցի վերջին օրերը . . Ց. Սպենդիար
Դ. Սունդուկեանցի բաց գերեզմանի առաջ . . . . . Ա. Խատիսեան, Հ. Առաքելեան, Մ. Ջմշկեան

ԿՈՉ ՀԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Բառանամակ ՄԵՆԱԿԻ... Յօբել. Յանձնաժողով

աբան «ՀԵՐՄԷՍ», Գրաֆսկայա 6. Տելեֆօն № 566.

Типографія «ГЕРМЕС», Графская 6. Телефон №